

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ՏՈՆԸ

Դեկտեմբերի 24-ին, երեքշաբթի օր, եկեղեցական շքով և հանդիսությամբ, Մայր Աթոռում նշվեց նախավկա և առաջին մարտիրոս Ս. Ստեփանոս սարկավագի տոնը։

Ս. Ստեփանոսի տոնը Մայր Աթոռում միաժամանակ տոնն է Հոգևոր Ճեմարանի սարկավագների և ուսանողության։

Այս տարի էլ Ս. Ստեփանոսի տոնը ավելի կազմակերպված և հանդիսավոր կերպով անցկացնելու համար, Մայր Աթոռի սարկավագների ժողովը զբաղվեց նախապատրաստական աշխատանքներով։ Օրվա տոնի հանդիսություններին որպես բուրվառակիր ընտրվեցին Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը և Մայր Տաճարի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։

Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը հրավիրվեց սարկավագների ժողովի կողմից պատարագելու Ս. Ստեփանոսի տոնին։

Աջակողմյան և ձախակողմյան դասերի դասապետներ ընտրվեցին բարեշնորհ Խորեն և Ժիրայր սարկավագները։ Ըստ հարմարության սարկավագները իրենց միջև բաժանեցին օրվա տոնի առիթով երգվելիք օրհնության՝ «Նահատակ բարի Քրիստոսի» և հարցի՝ «Ընդ երկնային հոգեղինաց դասքն» շաբաթականների մեներգները։

Դեկտեմբերի 23-ին, երկուշաբթի օր, երեկոյան ժամը 5-ին, Մայր Տաճարում ժամերգությունից հետո կատարվեց Ս. Ստեփանոսի նախատոնակը։ Հանդիսավոր արարողության մասնակցում էին ամբողջ միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը։ Մայր Աթոռի սարկավագները, Մայր Տաճարի կամարների տակ, վեհ ու հանդիսավոր կերպով ոգեկոչեցին հիշատակը Ս. Ստեփանոսի՝ հոգեթով շարականների երգեցողությամբ։

Դեկտեմբերի 24-ին, առավոտյան ժամը 8-ին, սկսվեց հանդիսավոր ժամերգությունը։ Դասերում կանգնած դեմ առ դեմ, խանդավառ և տպավորիչ երգում են «Աշխարհ ամենայն»-ը նոր և ծանր եղանակով, կանոնագուլխը՝ «Իւր սարօքն»։

Մայր Տաճարում ներկա են ամբողջ միաբանությունը, Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը։

Իշման Ս. Սեղանի առաջ Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ, նախագահում է եկեղեցական հանդիսությանց։

Շարականները, մեղեդիները այսօր էլ կատարվում են հաջողությամբ և ապրումով։ Հանդիսավոր, վեհ ու ջերմ հնչում է «Այսօր դասք»-ը և բոլորի մտածման առաջ կենդանանում, պայծառանում է քրիստոնեական կրոնի աննկուն մարտիրոսի և առաջին նախասարկավագ Ստեփանոսի պայծառ դեմքը։

«Փառք ի բարձունս»-ից առաջ սարկավագները Մայր Տաճարի հարավային ավանդատնից դուրս են գալիս զույգ-զույգ, բուրվառ և խնկի տապանակ ի ձեռին, սաղավարտ ի գլուխ և ըստ ավագության շարվում Իշման Ս. Սեղանի առաջ։ Հուզիչ է պահը և տեսարանը՝ գրավիչ։ Ծանր և հանդիսավոր երգվում է հրեշտակների փառաբանությունը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ»։ Վեհափառ Հայրապետի «Փառք, պատիւ» մաղթանքի հետ, երեք անգամ հնչում է արծաթյա բուրվառների զվարթ մեղեդին՝ խնկի անուշ բուրմունքով

լցներով Մայր Տաճարը և հավատացյալների հոգիները։

Ապա միաբերան ու դաշն կարդացվում է «Զգաստութիւն սրբոց» մեծ քարոզը, որից հետո սարկավագների խումբը երգում է «Նախասարկաւագ և առաջին մարտիրոս Ս. Ստեփանոս» Մանկունը շարականը։

Վեհափառ Հայրապետը «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի մեջ հուզումով և ապրումով ոգեկոչում է մի անգամ ևս Ս. Ստեփանոսի հիշատակը, որպեսզի Իր սարկավագ որդիներն ու միաբանները ապրեն մեծ մարտիրոսի հոգով և օրինակով։

Ժամը 11-ին սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը։

Օրվա մեծ տոնին ի պատիվ, պատարագիչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը կատարում է ճեմարանական երկու նոր սարկավագների՝ ուրարակիր Հակոբ Պողոսպայլյանի և Վարդան Շամլյանի (Խայաթ) սարկավագական ձեռնադրությունը։

Սուրբ պատարագի ավարտից հետո, սարկավագների ամբողջ խումբը, վարդապետների առաջնորդությամբ, բարձրանում է Վեհարան՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը։



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԸ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԻՆ. ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԻ ԱՌԱՋ։

Առավոտյան հանդիսավոր ժամերգության վերջն է։ Վեհափառ Հայրապետի դիմաց շարվել է սարկավագների խումբը՝ ստանալու համար բոլորի սիրելի Հոր օրհնությունն ու պատգամը։ Վեհափառ Հայրապետը սարկավագների առաջ պատմում է գեղեցկորեն Ս. Ստեփանոսի կյանքի և գործունեության ուսանելի դաշտը, վեր է հանում ծառայության, հավատարմության և նվիրման ոգին, որ ուներ Ս. Ստեփանոսը, և խրատում է Իր զավակներին՝ ծառայել իրենց համեստ պաշտոնի մեջ, Ս. Ստեփանոսի օրինակով։

Վեհափառ Հայրապետի խոսքը լսվում է մեծ ուշադրությամբ և ոգևորությամբ։

Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին և նվիրում է սարկավագներին մեկական գեղեցիկ, կաշեկազմ Աստվածաշունչ, այլ նվերների հետ։

Ժամը 3-ին, վանքի ընդհանուր սեղանատունը, տրվում է ճաշկերույթ ի պատիվ սարկավագների։

Ճաշին ներկա է Վեհափառ Հայրապետը, որը և օրհնում է սեղանը։

Ներկա են նաև միաբանությունը, դասախոսական կազմը և վանքի պաշտոնեությունը։

Ճաշին, առաջինը սարկավագների տոնը շնորհավորում է Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը։ Ապա շնորհավորության սրտագին խոսքեր են ա-

սում նաև գերաշնորհ Տ. Սահակ, Տ. Վարդան սրբազանները և պր. Արթուն Հատիտյանը։

Բարեշնորհ Հակոբ սարկավագ Պոզապալյանը երգում է, իսկ բարեշնորհ Վարդան սարկավագ Շամլյանը կարդում է Ս. Ստեփանոսին նվիրված իր գեղեցիկ բանաստեղծությունը։

Ճաշի վերջում բարեշնորհ Սարգիս սարկավագ Բեհբուդյանը շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին, Ճեմարանի տեսչության և միաբանության՝ սարկավագների տոնի առթիվ ցույց տրված ջերմ հոգատարության և քաջալերության համար, և խոստանում է հանուն իր ընկերների՝ նմանվել Ստեփանոս սարկավագին՝ իրենց կյանքով և աշխատանքով։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, ի պատիվ Ս. Ստեփանոսի տոնի, ուսանողության կողմից ներկայացվեց Միրզա Սարգիս Վանանդեցու «Մեծն Ներսես» պատմական թատերգությունը, ղեկավարությամբ վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանի և բեմադրությամբ բարեշնորհ Սարգիս սարկավագ Բեհբուդյանի։

Ներկայացումը, որպես առաջինը Հոգևոր Ճեմարանի պատմության մեջ, անցավ հաջող, արժանանալով բոլոր ներկաների ծափերին ու գնահատությանը։

Վեհափառ Հայրապետի պահպանիչով փակվեց Ս. Ստեփանոսի տոնին նվիրված հանդիսությունը Մայր Աթոռում։

***

ԲԱՐԵՇՆՈՐՀ ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԸ ծնվել է 1937 թվականին Գրրգխանում (Ալեքսանդրետի շրջան, այժմ Թուրքիա)։ Նախնական կրթությունն ստացել է Բեյրութում և 1951—1955 թվականներին աշակերտել է Անթիլիասի Դպրեվանքին։ Երկու տարի ստորել է Բեյրութի էշրեֆիե թաղամասի կենտրոնական միջնակարգ դպրոցում և 1957 թվականի օգոստոսին ներգաղթել է և ընդունվել Հոգևոր Ճեմարանում։ Սարկավագ է ձեռնադրվել դեկտեմբերի 22-ին։

ԲԱՐԵՇՆՈՐՀ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՇԱՄԼՅԱՆԸ (ԽԱՅԱԹ) ծնվել է 1930 թվականին Հալեպում։ Նախնական կրթությունն ստացել է Հալեպի Մեսրոպյան վարժարանում, որն ավարտել է 1946 թվականին։ Ապա զբաղվել է արհեստով, միաժամանակ պաշտոնավարելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Կիրակնօրյա դպրոցում (Հալեպ)։

1956 թվականին որպես ուսանող ընդունվել է Հոգևոր Ճեմարանում և սարկավագ է ձեռնադրվել դեկտեմբերի 22-ին։